ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 52-27-63 ֆաքս 583947

«03» 09 2013թ. № 17/4-8517

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ նախագահ

տիկին Շուշան Դոյդոյանին

ք.Երևան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ

Տեղեկություն ստանալու Ձեր հարցումը ստացվել և քննարկվել է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունում:

Հայտնվում է, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի՝

1. Վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին:

2. Վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ:

Համաձայն <<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վարչական մարմինը տեսանյութի պատճենը տրամադրում է վարչական ակտի հասցեատիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցչի գրավոր պահանջի հիման վրա:

Նկատի ունենալով, որ չեք հանդիսանում Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.07.2013թ. թիվ 1300763392 որոշման հասցեատեր և չի ներկայացվել վարույթին մասնակցելու լիազորությունը հավաստող փաստաթուղթ, ուստի Ձեր խնդրանքը բավարարել հնարավոր չէ:

Պետ Ա.Գալստյան